

անկախ մահ, խորտակեցան նիգ դժոխաց։ Ար զխայթոց մահուն կարճեաց՝ Տէրն Յարուցեալ՝ գոչէ զուարթ, արի՛ մարդ, անկեալդ խաւարի։ ահա ժամ, յորում ոչ ևս ուրեք երբէք է խաւար։ Օն ի լոյս դիմեա՛ երազ՝ հաւատք, յոյս, սէր կեանք յօրինեն քեզ յարութեան։ կեանք, որ ձգի, երկայնի անդր ևս քան զգերեզման։ Զայս յիշատակ վերակենցաղ կենդանութեան բերէ մեզ օրս յիշատակի Տեառն Յարութեան, զարթնուի ի քնոյ, ծնանել ի լոյս անմահութեան, յարութեան։ ի լոյս, յորում՝ որ անկաւն ի փառաց՝ մարդ բանական՝ կանգնեցի ի նոր կեանս — յանձն հաւատկեր Աստուածեան։ Երանի՛ ում՝ բանին միտք զգալ զլոյս յարութեան։ նա երանի՛ որում՝ բանայն զմիտս մանկանց առաջնորդել ի լոյս կենաց, ի հաստատ յոյս յարութեան — յանմահ ի կեանս։

Վեհափառ Տէր, զո՞ արդեօք քան զՎեհ Գլուխդ խնդրեցուք ի մեզ, որ զլոյս միայն երկնէք ի խորհուրդս Ձեր, ջանալ ջանայք ի լոյս առաջնորդել զճօտ Ձեր վայրաժառին, զի լուսով ծանիցեն զանձինս և ի միութիւն կենաց գայցեն։ ի գիտութիւն սնուցանէք զորդիս Ձեր, ի գիտութիւն, որ զխաւար հալածէ յամենայն բանական մտաց, հետազօտեալ ի ծածուկութեան զամենայն հանգամանս կենաց՝ ըստ կատարեալ բանականութեան, յորում միայն արութիւն փոխանակէ զվատութիւն ծուլութեան, և լոյս բանական զխաբեպատիր ստուերս զգայական։ Սնուցանէք զորդիս Ձեր ի գիտութիւն, և ի բարոյականութիւն, առանց որոց կորեան ազգք և կորնչին։

Առ որ, Վեհափառ Տէր, բացէք զտաճարս լուսոյ, որոյ սանունքս ահա մերձեալ կամք առաջի վեհ Գլխոյդ ցուցանել զերախտագիտութիւնս, ոչ ի ձեռն ունայն և անցաւոր նուիրաց՝ այլ պատարագ՝ զիրաքանչիւր զսիրտ և զգացումն մատուցանելով Տեառնդ, Միանգամայն մաղթանս ջերմ վերառաքելով առ Յարուցեալն Յարուցիչ՝ երկարել զթիւ կենաց Հօրդ Մերոյ ի յարութիւն բովանդակ ազգիս ի նոր կեանս լուսոյ։ Եւ Դուք, Հայր, կարկանդէք զաջ Ձեր յօրհնել զմանկունս Ձեր, զորս ստացայրդ երազարայլ ևս դիմել ի լոյսն փրկաւետ ըստ ինամոնցդ։

Ի Դիւան Հօգեւն — Էլեւոյ Գեղեւն — Տեւրեւն։

ԱՇԱԿԵՐՏ Զ. ԴԱՍ. Թ. ՊԱԼԵԱՆ.

Ի 1884 — Զ. Ա. ԴԵԼԷ 12.

ՆԱՄԱԿ ՄՈՍԿՎԱՅԻՑ.

Մոսկվայի Հայ ժողովրդականք մի փառաւոր գործ կատարեցին իբրեւ առ հաւատչեալ երախտագիտութեան։ Նորա Օգոստամիառ Աղէքսանդր Բ. Վայսեր կոկեճալի մահուան ամենատխուր արկածի օրից, եօթնօրեայ հոգեհանգստեան տխրաշուք բարեմաղթութիւնները կատարելիս յորդ արտասուօք ցօղեցին Աստուծոյ տաճարը և ապա որոշեցին պատրաստել մի մեծագին

Ճարտարարուեստ պատկ արծաթեայ, շրջապատեալ զափնիով և երփնեղանգ ծաղիկներով Վայսեր զագաղի համար: (Московскія Вѣдомости 15 марта): Ժողովրդական հանրագրով այս պարտաւորութիւնը յանձնուեցաւ ինձ, փոխաշուք Յովհաննու Յովնանեանց և Մեծապատիւ Գեորգայ Լիանդեանց:

Մարտի 13-ում ուղևորելով Մոսկվայից Ս. Պետրբուրգ, 14-ում ներկայացանք Նախ Մոսկվայի ընդհանուր կուսակալ իշխան Բոլգոբուկինի և ապա ներքին գործոց նախարար Վսեմ. Կոմս. Լոմու Մելիքեանցին և ստացանք բացարձակ հրաման տանել նոյն իսկ երեկոյի հոգեհանգստեան պաշտօնի ժամանակ Ս. Պետրոսի, Պողոսի եկեղեցին և մատուցանել Օգոստափառ նշխարաց արժանայիշատակ հանգուցելոյն:

Եկեղեցումը ժողոված էին արդէն հանգուցելոյն Օգոստափառ եղբարքը որդիքը և ըտեր Վայսերական արական սերունդը, արտասահմանից եկած իշխանք, արքայազուիք և զեսպանք. նմանապէս Ռուսաստանի բարձր դասակարգի անձինք, և կարգաւ երկու դաս կանգնած սպասում էին զիմաւորել Վայսեր և Վայսերական գերդաստանի սգազգեաց թագուհեաց, Եկեղեցւոյ դրան առաջ զիմաւորեց մեզ բարձրաստիճան հանդիսապետը, իմ երկու մեծապատիւ ընկերները բարձրացուցին պսակը և ես ոսկետառ լայն ժապաւենները և առաջնորդութեամբ հանդիսապետի և երկու սննեկապետների մօտեք տաճարը և ծանր քայլերով գնացինք առաջ մինչև արքայական դուռը. տմենայն կողմերից կարգաւորով ժապաւենները՝ լսուում էր մի ընդհանուր շշուկ Армянекая Депутация изъ Москвы. (Հայոց երեցփոխանութիւն ի Մոսկվայէ) բնմի առաջից դարձանք դէպ արեւմուտք և հանդիսապետի կարգադրութեան համաձայն ես միայն առնելով պսակը աստիճաններից բարձրացայ դէպի զագաղի բարձրաւանդակը, և զրի պսակը նշանակած տեղը և ընկերացս հետ համբուրեցինք բարերար թագաւորի արիւնաներկ օծեալ սուրբ Աջը. Մինչ մենք իջանք աստիճաններից՝ և կանգնեցանք մեզ նշանակեալ տեղը, և ահա մօտան եկեղեցի Վայսերական տանը սգաւոր թագուհիք և նոցա հետ միանալով Վայսերազուիք շրջապատեցին զագաղը, սկսաւ հոգեհանգստեան պաշտօնը, որ տեւեց մի ամբողջ ժամ:

Օգոստափառ հանգուցելոյն երեսի կերպարանքը անփոփոխ էր. իբրև կենդանի կննջէր, հազիւ տեղ տեղ նշմարուում էին վերքերի փոքրիկ զիծեր. առողջ ձեռքի տակ աննշմարելի էր միւսի պակասութիւնը, հագցրած էր իւր սիրած գլուխէն շքազգեստը, կուրծքի վերայ դրած էր ձուաչափ երկու Գլուխէն Յիսուսի և սուրբ կուսի պատկերներով, որոնք զրբի նման փակուած կրում էր հանգուցեալը փոքր ժապաւենով իւր կուրծքի վերայ զգեստի տակից, Կուրծքից դէպ ի վայր մարմնոյ միւս մասը ծածկուած էր արքայական զիազարդով և ծաղկեայ փունջերով: Դագաղի զխի վերեւ կանգնեցրած էր Վայսերական զրոշակը: Նոյն իսկ կողմը սեղանների և սկէթներ սփռոցների վերայ կարգաշարուած էին Վայսերական նշանաւոր թագերը, զայիսոնը և երկրագունտը. իսկ ոտքի կողմը մինչև Տի բարձի

վերայ շքանշանները: Գաղազի պատուանդանի և վանկակապառի շուրջը ծածկուած էր զանազան քաղաքների, Տէրութեանց, աղզութեանց և ընկերութեանց մատուցած պատկերով: Տաճարի միջնապարէի ջահի տեղից կախուած էր մի մեծ լծադ, որի միջից զէպի վայր տարածուում էր շքեղ հովանին: որոյ երեւը արծաթ գիպայ, ներքին կողմը սպիտակ խալիչ սեւա մանրիկ աղիներով, սրբայական ձերանայ լինակա: հովանին շորս ծայրի բաժանած՝ միանում էր տաճարի շորս սիւներին, որոնք ծածկուած էին սակեթել զիդաներով: Եկեղեցւոյ բոլոր սիւների և որմերի վերայ ամենայն անգ չիւսուած էին զափնի պատկեր: որոց մէջ սակեառներով փայլում էր ԱՂԷՔՍԱՆԴՐ Բ. անունը: Բարձրաւանդակի շորս անկիւնի վերայ հերթակալ էին շորս բարձրաստիճան զեներալներ և երկու երկու ազնուական զինու որաց զպրոցներ շաշկերաներ:

Հոգեհանգիստը վերջանալից յետոյ՝ երբ հել լծակալ քահանայն սկսաւ կարգաւ Յովհաննու Աւետարանի զլուր լուռ ձայնով, առաջ եկան կարգաւ Վայսերական սգազգեաց լծադուհիք, լծադուհիք և այլք: համբուրեցին հանգուցելոյն աջը և եւ միջ զաղաղի մօտ կանգնած զիտում էի իմ վերը նկարագրած տեսարանը, այլք եւ ուշադրութեամբ կարդում էին մեր մատուցած պատկեր վերայի ժապաւենիկի սկէտառ գրուածքը՝ «Великому покровителю Армянской церкви, царю освободителю, отцу благодетелю, Александру II. отъ Московского Армянского общества» . (Մեծի խնամակալի Հայոց եկեղեցւոյ, Աղատարար լծադուհիի բարերար Հոր Աղէքսանդր Բ. Մոսկովայի Հայ հասարակութիւնից):

Հետեւեալ օրը 15 մարտի կատարուեցաւ նոյն եկեղեցւոյ մէջ լծադման տխուր հանդէսը և ամփոփեցաւ մարմինը աջակողմեան դասու սեղանի առաջ: Թաղմանը ներկայ գտնուեցան միմիայն Վայսեր զերդաստանը, Եւրոպիոյ լծադաւորաց առաջին կարգի ներկայացուցիչները և Ռուսաստանի առաջին երկու բարձր դասադպրի պաշտօնէականք: իսկ քաղաքում միայն լսուում էին լծադմանների որոտալի ձայները:

Մենք եւս Պետրոսի զմեր համազգեաց հետ եկեղեցւոյն մէջ սրբուհւոյ Վատարինեայ եկեղեցւոյ մէջ, Սուրբ Պատարագից յետոյ կատարեցինք հոգեհանգիստ, ուր ինձ վիճակեցաւ խօսիլ մի քանի խօսք հանգուցելոյ յիշատակին և մաղթել նորադասակ Վայսեր Էստուծոյ հովանաւորութիւնը և առաջնորդութիւնը զէպի բարին և կատարեալը:

Մոսկովայի պատգամաւորքս արժանացանք նորապետակ կայսեր ներկայանալու շնորհացը 17 մարտի 12/1, ժամու աւուր Աննիէկենի պալատի մէջ, մեծ դահլիճումը՝ ուր կարգաւ կանգնած էինք՝ մօտ ԱԵՅՄԸԸ կայսրուհւոյ հետ և լծադաւորանդ մանկան հետ, որոնց առաջնորդում էին իշխան Դօլկորոսկի Մոսկովայի ընդհանուր կուսակալը և կոմս Լօռու Միլիբեանց նախարարն ներքին գործոց, Վայսըրը ասաց յետագայ խօսքերը, «Տեառք, ես ցունկացայ առաջ քան վերադարձ մեր Մոսկովա, տեսնել ձեզ եւ անձամբ յայտնել ձեզ իմ շնորհակալութիւնը, որ դուք աշխատանք կրեցիք զալ, ց'19 տալ մեր ցաւակ-

ցածրինը եւ հանդուցեալ իմ հայրիկի (ՅԱՅՈՒՄԻ) Թաղաւոր Կայսեր յարգանք եւ ջերմեւանդութիւնը՝ որ միշտ ունէիք առ նա, շնորհալիւ եմ՝ եւ զարմեալ շնորհակալ եմ, յուսամ եւ յայսմ հետէ նոյնը եւ առ իս, վայելիլ ձեզ հետ թարօթութիւն եւ հանդիպել ձեզ ուրախ դէպքերում : Պատգամաւորաց բարձր և ձիգ Կէշէնները թնդացրին զաճիճը :

Այսօր վերադառնալով իմ պատուական ուղեկիցներէ հետ Մասկվա, պարտք ինձ համարեցի յանձնել այս անցքը պարբերական հրատարակութեան :

ՅԱԿՈԲ ԱԻԱԳ ԲԱՀԱՆԱՅ ՍՈՒՐԵՆԵԱՆՑ

15 Մարտի 1884 ամի

Մ-ի-է-

Մարտի 9-ին Պարսից Օգոստափառ Հաճի հօրեղբայր Սուլթան Մուրատ Միրզա իշխանը իւր Մեքքէ ուխտագնացութենէն դարձած ժամանակ ցանկացաւ այցելել և Մայր Աթոռոյս, ուր գոաւ և արժանավայել ընդունելութիւն :

Կէս ժամուչափ Ազգիս Ահհափառ Հայրապետի հետ տեսակցելուց ու խօսակցելուց զկնի ցանկացաւ տեսնել և Մայր Աթոռոյս Թանգարանն ու Գէորգեան ճեմարանը, որի հոյակապ դաճիճի մէջ քաղցրանուագ երգերով ընդունեցին ճեմարանի սանուկքը, և ապա բազմութեամբ ուղեկիցներէ վերադարձաւ Երեւան, Երեւանայ Նահանգապետ Նորին Գերազանցութիւն Պ. Հալիկով զօրապետը ուղեկից էր Նորին բարձրութեան :

* *

Խմբագրութիւնս շնորհակալութեամբ ստացաւ « Խորհրդածութիւն Գօղ-տոր » նկըն Աւերիկացու և Յսւելուածներ » գրքոյկը, աշխատասիրութիւն Գրիգոր քահանայի Մանգակունդոյ, Սորա մասին կիսօտնք Արարատի յառաջագայ համարներում զայն կարգաւորց յետոյ :

* *

Ազգիկի Արարատի մէջ Չաշնագրեալ երգարանի մասին տպուած յօդուածի « Առ Ե. Բ. » վերնագիրը սխալմամբ բաց է թողուած :

* *

Մեծապատիւ Գրիգոր Իզմիրեանցը ընծայեց Մայր Աթոռոյս Գէորգեան ճեմարանի Մտտենագրարանին մի « Բառարան Ռուսերէնից Գաղղիներէն և Գաղղիներէնից Ռուսերէն, Մակարովի » երկու հատոր, և մի « Քաղուածք խաչակրաց պատմագրութիւնից, Հայ աղբիւրներ Գիւլորէի » որի մասին յայտնուածք հրատարակական խորին շնորհակալութիւն :